

# Newsletter

Issue 5 (10)  
June 2006

# Ī »Õ»Ī³ . Çñ

ԱՅԻ 5 (10)  
ՃԱՅՅԵ 2006

## ATC Graduation 2006

On June 4, Arshaluys Tarverdyan, Rector of the Armenian State Agrarian University, led the 2006 ATC graduation ceremony. Levon Mkrtchyan, RA Minister of Science and Education; John Evans, the US Ambassador to Armenia; Levon Rukhkyan, the RA Vice Minister of Agriculture; Manvel Badalyan, Head of the ASAU Council and Alumni Association; Bill Miller, former USDA Marketing Assistance Project's Director; Dora Rumsey, former USDA MAP TDY Consultant; Rosemary Veneciale, former ATC instructor and other dignitaries participated.



Rector Tarverdyan awarded the US Ambassador to Armenia, John Evans, and the 1998-2000 director of USDA MAP, Bill Miller, with the newly instituted Armenian State Agrarian University Gold Medal for their input in the development of agrarian education and research in Armenia. The event was covered by four Armenian TV companies, several news agencies and newspapers.

The graduation ceremony was excellently organized by Iveta Simonyan, ATC instructor. She made the event unforgettable for the graduates and the rest of the participants.

\*\*\*

The Armenian Minister of Science and Education, Levon Mkrtchyan: "Agri-food sector remains one of the priority sectors in our economy, and you are the ones who will implement a new system of management in the sector and create new jobs. I thank ASAU and ATC for their significant input in the development of the Armenian economy."



\*\*\*

U.S. Ambassador to Armenia, John Evans: "Your timing is extraordinarily good. You will be a part of the agrarian revolution that is going to take place in the South Caucasus."

\*\*\*

Bill Miller: "In summer 1998, I discussed with Rector Tarverdyan what can USDA MAP do in education. It was my first day as the Director of USDA MAP and Mr. Tarverdyan's second day

## ԱՌԼԿ-ի հերթական շրջանավարտները

Հունիսի 4-ին, Հայաստանի պետական ագրարային համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանի ղեկավարությամբ տեղի ունեցավ ԱՌԼԿ-ի 2006 թ. շրջանավարտների ավարտական արարողությունը, որին մասնակցում էին



ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, Հայաստանում ԱՄՆ դեսպան ԱՄՆ ղեսպան Ջոն Էվանսը, ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Լևոն Ռուխկյանը, ՀՀ ԱՊԱՀ խորհրդի և

շրջանավարտների միության նախագահ Մանվել Բադալյանը, ԱՄՆ ԳԴ Մարկետինգի աջակցության ծրագրի նախկին տնօրեն Բիլ Միլլերը, ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի նախկին փորձագետ Դորա Ռանզին, ԱՌԼԿ-ի նախկին դասախոս ռոզմարի Վենեցիալեն և այլք: Պարոն Թարվերդյանը ԱՄՆ դեսպանին և ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի 1998-2000 թթ. տնօրեն Բիլ Միլլերին հանձնեց ՀՊԱՀ նորաստեղծ Ոսկե մեդալը՝ Հայաստանում ագրարային կրթության ու գիտության բնագավառում ունեցած ներդրման համար: Իրադարձությունը լայնորեն լուսաբանեցին ՋԼՄ-ները:

Ավարտական արարողությունը զերազանց էր կազմակերպել ԱՌԼԿ-ի դասախոս Իվետա Սիմոնյանը: Նրա շնորհիվ իրադարձությունը անմոռաց կմնա շրջանավարտների և մյուս մասնակիցների համար:

Պրն Թարվերդյանն ու պրն Դանը ՀՊԱՀ դիպլոմներ և Տեխասի A&M համալսարանի վկայականներ հանձնեցին շրջանավարտներին: A&M

\*\*\*

ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյան. «Ազրոպարենային ոլորտը մնում է մեր տնտեսության գերակա ոլորտներից մեկը, և դուք եք, որ այդ ոլորտում կառավարման նոր համակարգ եք ներդնելու և նոր աշխատատեղեր եք ստեղծելու: Շնորհակալություն եմ հայտնում ՀՊԱՀ-ին Հայաստանի տնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալից ներդրման համար»:

\*\*\*

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանս. «Դուք ավարտում եք արտակարգ լավ ժամանակաշրջանում. դուք մաս կկազմեք Հարավային Կովկասում տեղի ունենալից ագրարային հեղափոխությանը»:

\*\*\*

Բիլ Միլլեր. «1998 թ. ամռանը ես ռեկտոր Թարվերդյանի հետ քննարկում էի այն հարցը, թե ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ը ինչով կարող է օգնել կրթական ոլորտում: Դա իմ աշխատանքային առաջին, իսկ պարոն Թարվերդյանի երկրորդ օրն էր: Այսօր մենք հրաշալի առիթ ունենք շնորհավորելու և շնորհակալություն հայտնելու ագրարային համալսարանին, ԱՌԼԿ-ին, դուք»:

as the Rector of the Agricultural Academy. Today, we have this wonderful opportunity to congratulate and thank the Agrarian University, ATC, Dr. Dunn, USDA, US taxpayers, and the US Embassy for all their efforts and especially the parents for the most important input - the students. Knowledge and competence are the moving force to globalization. I challenge you to become the "linchpins" of the Armenian and Georgian societies."

\*\*\*

Daniel Dunn: "I welcome you all on behalf of the Texas A&M University and on my behalf. I am proud of this graduate class. You have changed during the years at ATC; you are confident, optimistic and have more creative potential. You have learned to work as a team, to compromise, and share successful results. The Armenian and Georgian agribusinesses look forward to have you in top positions."



Դանին, ԱՄՆ գյուղընթացարտամենտին, ամերիկյան հարկատուներին, ԱՄՆ դեսպանությանը և շրջանավարտների ծնողներին՝ իրենց ունեցած մեծ ներդրման համար: Փիտեւիքն ու ձեռնահասությունը գլոբալացման շարժիչ ուժն են: Ես մարտահրավեր եմ նետում ձեզ դառնալու շայաստանի և վրաստանի հասարակությունների շարժիչ ուժը»:

\*\*\*

Դենիել Դան. «Բոլորիդ ողջունում եմ Տեխասի A&M համալսարանի և անձամբ իմ անունից: Ես հպարտանում եմ մեր շրջանավարտներով: ԱՌԿ-ում անցկացրած տարիների ընթացքում դուք փոխվել եք՝ դառնալով ավելի ինքնավստահ և լավատես, կուտակելով ստեղծագործական մեծ ներուժ: Դուք սովորել եք թիմային աշխատանք կատարել, փոխզիջումների հասնել և բաժանել հաջողության պտուղները: Չայաստանյան և վրաստանյան ագրոբիզնեսի ոլորտը սպասում է ձեզ՝ ամենապատասխանատու պաշտոնները զբաղեցնելու ակնկալիքով»:



## The Armenian Minister of Science and Education and the U.S. Ambassador Opened the New ICARE/ATC Office

By Olga KUDOYAN  
ATC 5



Prior to the ATC graduation ceremony on June 4, the Armenian Minister of Science and Education, Levon Mkrtychyan, and the US Ambassador to Armenia, John Evans, officially opened the renovated fifth floor where offices of ICARE management and ATC instructors as well as the new computer lab and the conference room are



## ԿԳ նախարարն ու ԱՄՆ դեսպանը բացեցին ԱՅԿՄԿ - ԱՌԿ-ի նոր հարկաբաժինը

մ.թ. 3 ՆՁՁ, ՁԱՉՍ  
2 ՁՁՂ 5

Հունիսի 4-ին, ԱՌԿ-ի ավարտական միջոցառումից առաջ ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը և Չայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսը պաշտոնապես բացեցին ԱՌԿ-ի վերակառուցված 5-րդ հարկը, որտեղ տեղադրվել են ԱՅԿՄԿ հիմնադրամի աշխատակազմի, ԱՌԿ-ի դասախոսների աշխատասենյակները, համակարգչային լաբորատորիան, ժողովների սենյակը և համգտի սենյակը: Հարկաբաժնի վերանորոգումը ԱՄՆ ԳԴ արտաքին գյուղատնտեսական ծառայության (ԱԳԾ), Տեխասի A&M համալսարանի և ԱՅԿՄԿ հիմնադրամի համատեղ ջանքերի արդյունքն է: Ի թիվս կրթական այլ հայտնի առավելությունների, ՀՊԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերոյանը հյուրերին մասնավորապես տեղեկացրեց, որ մինչ հայաստանյան այլ համալսարաններ դեռևս քննարկում են կրեդիտային համակարգի ներդրման հարցերը, ՀՊԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում այն գործնականում կիրառվում է դեռևս 2000 թ.-ից:

Կրթության և գիտության նորանշանակ նախարարն ակնհայտորեն գոհ էր, որ Չայաստանի պետական ագրարային համալսարանը շոշափելի առաջընթաց քայլ է արել ագրոբիզնեսի ոլորտի ժամանակակից որակյալ կրթություն ապահովելու գործում: Բացման արարողության ժամանակ ՀՊԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերոյանը շեշտեց ԱՄՆ ԳԴ Մարկետինգի աջակցության ծրագրի նախկին տնօրեն Բիլ Միլլերի և ԱՌԿ-ի հիմնադիր տնօրեն Դենիել Դանի անձնական ջանքերը՝ Չայաստանում արևմտյան տեսակի ժամանակակից ագրոբիզնեսի կրթական կառույցի ստեղծման ու զարգացման գործում: Ռեկտորը չնշեց իր անձնական դերը, սակայն նա մեծապես աջակցել է ԱՌԿ-ի ստեղծմանն ու կայացմանը:

located. The renovated office is the result of joint efforts by USDA Foreign Agricultural Service, Texas A&M University, and ICARE. Among other well known education advantages, the Rector of the Armenian State Agrarian University, Arshaluys Tarverdyan, informed the Minister that ATC has practiced the credit system of grading since 2000, while other Armenian universities are yet in the stage of discussions.

The newly appointed RA Minister of Science and Education was apparently pleased that the Agrarian University is making a tangible progress towards a high quality modern agribusiness education. At the opening ceremony, Rector Tarverdyan stressed the role of USDA Marketing Assistance Project, former USDA MAP Director, Bill Miller, and Daniel Dunn in starting a modern western structured agribusiness education in Armenia. The Rector did not mention his own role but he has been very supportive in establishing and further development of ATC.



## Bill Miller Awarded the ASAU Gold Medal

By Sos AVETISYAN  
PR Specialist, ICARE Foundation

Bill Miller, Professor Emeritus, University of Georgia and Honorable Professor of the Armenian State Agrarian University, visited Armenia to participate in the ATC graduation ceremony on June 4. It was Dr. Miller's first visit since he left Armenia six years ago upon completion of his more than successful mission as the Director of USDA Marketing Assistance Project in Armenia in 1998-2000. The entire Armenian agribusiness sector was rehabilitated and adapted to the new market economy. It experienced unprecedented modern development through USDA MAP's financial, technical, and marketing assistance efforts under Dr. Miller's leadership and under the leadership of his successors, Craig Infanger and Allan Lines. Dozens of old and newly emerged fruit and vegetable processing enterprises, wineries, and dairy processing factories restarted or started successful production, marketing, and export activities due to the wise use of the American taxpayer money, American and Armenian expertise, and the hard work by Armenian farmers and agribusinesses.



At the ATC graduation ceremony, the Rector of the Armenian State Agrarian University, Arshaluys Terverdyan and Bill Miller met as old friends. Rector Tarverdyan had prepared a pleasant surprise for the US Ambassador to Armenia, John Evans and Bill Miller: they were awarded the Armenian State Agrarian University's Gold Medal for their significant input in the development of agrarian education and research in Armenia. They were the first two persons ever being awarded with the University's newly estab-

## Բիլ Միլլերն արժանացավ ՀՊԱՀ Ոսկե մեդալի

Սոս ԱՎԵՏԻՍՅԱՆ  
ԱՀԿՄԿ հիմնադրամի  
հանրության հետ կապերի պատասխանատու

ԱՄՆ Ջորջիայի համալսարանի և ՀՊԱՀ պատվավոր պրոֆեսոր Բիլ Միլլերը ժամանել էր Հայաստան՝ ԱՈՒԿ-ի 2006 թ. ավարտական արարողությանը մասնակցելու նպատակով: Դա դուրս. Միլլերի առաջին այցն էր Հայաստան 1998-2000 թթ. որպես ԱՄՆ գյուղընթացարտամենտի Մարկետինգի աջակցության ծրագրի տնօրեն իր ավելի քան հաջողված առաքելությունն ավարտելուց ի վեր: Նրա ղեկավարությամբ, Հայաստանի ագրոբիզնեսի ամբողջ ոլորտը վերականգնվեց և հարմարեցվեց տնտեսական նոր՝ շուկայական հարաբերություններին: Այն աննախադեպ զարգացում ապրեց ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի ֆինանսատեխնիկական և մարկետինգային օժանդակության շնորհիվ՝ դուրս. Միլլերի և նրա հաջորդների՝ Քրեյգ Ինֆանգերի և Ալան Լայնգի ղեկավարությամբ: Պտուղ-բանջարեղենի և կաթնամթերքի վերամշակման և գինեգործական տասնյակ ձեռնարկություններ վերագործարկվեցին կամ գործարկվեցին և հաջողությամբ ծավալեցին արտադրական, իրացման և արտահանման գործունեություն՝ շնորհիվ ամերիկյան հարկատուների դրամի խելամիտ օգտագործման, ամերիկացի և հայ մասնագետների գիտելիքների, հայ ֆերմերների ու ձեռնարկատերերի աշխատասիրության:

ԱՈՒԿ-ի ավարտական միջոցառման ժամանակ ՀՊԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանն ու Բիլ Միլլերը հանդիպեցին որպես հին բարեկամներ: Պարոն Թարվերդյանը հաճելի անակնկալ էր պատրաստել պարոն Միլլերի, ինչպես նաև Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսի համար. նրանք պարզապես վեցին Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ոսկե մեդալով՝ Հայաստանում ագրարային կրթության ու գիտության զարգացման մեջ ունեցած նշանակալից ներդրման համար: Նրանք առաջինն էին, որ ստացան համալսարանի նորաստեղծ մեդալը: «Այն ամենի մեջ, ինչին մենք հասել ենք ագրարային արտադրության, գիտության, կրթության և խորհրդատվության բնագավառում ԱՄՆ ԳԴ մԱԾ-ի աջակցության ծրագրերի միջոցով՝ մեծագույն ներդրումը պատկանում է Բիլ Միլլերին», - ասաց դուրս. Թարվերդյանը ՀՊԱՀ Ոսկե մեդալը դուրս. Միլլերին հանձնելիս:

lished Gold Medal. "The biggest input in achievements that we now have in agrarian production, research, education, and consultancy through USDA MAP support programs has been provided by Bill Miller," Rector Tarverdyan stated while handing over the award.

The history of Armenia will yet evaluate the great professional and personal input that people like former USDA MAP Directors, Bill Miller, Craig Infanger, Allan Lines, the late USDA MAP Marketing Manager, Harley Martin, ATC founder and now Director of ICARE Foundation, Dan Dunn, and many USDA TDY consultants made helping the Biblical country create its prosperous future. As an Armenian, I pay the biggest tribute to these great Americans. I would like to state the following: **the economic roles of these people at the dawn of the 21<sup>st</sup> century is no less critical for Armenia than the political role that their great countryman Henry Morgenthau (the US Ambassador to Ottoman Empire, 1913-1916) played in the beginning of the 20<sup>th</sup> century and still plays for the rest of the Armenian history.**

ATC and ICARE foundation were happy to host one of these great Americans, Bill Miller.

Հայաստանի պատմությունը դեռևս արժեքավորելու է ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի տնօրեններ Բիլ Միլլերի, Քրեյգ Ինֆանգերի, Ալան Լայնզի, ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի մարկետինգի գծով երկարամյա տնօրեն հանգուցյալ Հարլի Մարտինի, ԱՈՒԿ-ի հիմնադիր տնօրեն Դենիել Դանի և ԱՄՆ ԳԴ շատ խորհրդակցական մասնագիտական և մարդկային ներդրումը բիբլիական երկրի նոր օրը կերտելու գործում: Որպես հայ, խորագույն հարգանքս մատուցելով այս մեծ ամերիկացիներին, կուզենայի արձանագրել հետևյալը. **այս մարդկանց տնտեսական դերակատարությունը 21—րդ դարի շեմին պակաս կարևոր չեղավ Հայաստանի համար, քան այն քաղաքական դերակատարությունը, որ ունեցավ նրանց մեծ հայրենակից Հենրի Մորգենթաուն (1913-1916 թթ. ԱՄՆ դեսպանը Օսմանյան կայսրությունում) 20-րդ դարի սկզբին և դեռ ունենալու է Հայաստանի մնացյալ պատմության ընթացքում:**

ԱՈՒԿ-ը և ԱՀԿԿԿ հիմնադրամը հպարտ էին հյուրընկալելու այդ մեծ ամերիկացիներից մեկին՝ Բիլ Միլլերին:

## Speech by Ani Movsisyan, ATC Graduate

Your Excellency John Evans, Ambassador of the United States of America to the Republic of Armenia; Honorable Rector; dearest Dr. Dunn; instructors; guests; students; parents and graduates:

Standing on this stage in front of all of you makes me shiver. It makes me experience the mixed feelings of happiness, pride, honor, inspiration, and... sadness. It makes me realize that very soon we will have to turn yet another fantastic page of our lives full of knowledge and a once-in-a-lifetime experience, full of joy and laughter. A page that is called ATC Life!

I feel very proud to speak on behalf of such a class where friendship, teamwork, eagerness and motivation to learn and help each other were the prevailing factors. Today, we are leaving behind hundreds of hours of classes, classes that provided us not only with pertinent knowledge, but also with precious lessons for life. We are entering into a new and completely different stage of our lives, yet we are also taking with us - in our hearts, minds and souls - the ATC experience, certain that we are all ready and armored to face the future.

ATC, you instilled in us the notion of dreaming bigger and flying higher. You brought to us the care and friendliness of our precious instructors and staff. You armed us with highly valuable teamwork skills. Through your assets – excellent teaching methods and rich curriculum, motivating atmosphere, computer and language labs, seminars, field trips, internships, parties and the newly launched career center - you unveiled for us many opportunities for self-actualization, for hunger to learn and better ourselves as proud students of ATC and the Armenian State Agrarian University and as proud citizens of Armenia and Georgia.

Graduates, together we make one big fat round circle, a circle that is linked by tight bonds of friendship and happy memories. This circle will remain unbreakable as long as we cherish the bonds uniting it. Each of us is a unique personality, with his or her aspirations, dreams and goals, yet TOGETHER we are the ONE. Hence all that is left to say is just:

GRADUATE CLASS 2006, WE ROCK!

## ԱՈՒԿ-ի շրջանավարտ Անի Մովսիսյանի Ելույթը

Չերդ գերազանցություն Հայաստանում ԱՄՆ դեսպան, հարգարժան պարոն ռեկտոր, սիրելի դոկտոր Դան, դասախոսական անձնակազմ, հյուրեր, ուսանողներ, ծնողներ և շրջանավարտներ:

Այն միտքը, որ հաշված թույլներ անց մենք պատրաստ կլինենք շրջելու մեր կյանքի ևս մեկ էջ՝ փորձով ու գիտելիքներով, ուրախությամբ և խիստով լի, ինձ համակում է երջանկության ու թախծի խառը զգացումով:



Ես չափազանց հպարտ եմ խոսել մի կուրսի անունից, որի համար ընկերասիրությունը, թիմային աշխատանքն ու գիտելիք ստանալու անհագ ձգտումը միշտ էլ եղել են որոշիչ գործոններ: Չնայած այսօր մենք հրաժեշտ ենք տալիս մեր շատ սիրելի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնին, այնուամենայնիվ վստահ ենք, որ Կենտրոնում ձեռք բերած կենսափորձը ընդմիշտ ուղեկից կլինի մեզ:

Հիանալի դասախոսական անձնակազմի, կիրառվող գերազանց ուսումնական մեթոդների, հարուստ առարկայաշարի, համակարգչային լսարանի, անցկացվող սեմինարների, թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում կազմակերպվող ուսումնական պրակտիկայի, ինչպես նաև ՀՊԱՀ կարիերայի կենտրոնի միջոցով մեզ՝ որպես Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի ուսանողների, որպես Հայաստանի և Վրաստանի հպարտ քաղաքացիների, ընձեռվել են ինքնահաստատման բազմաթիվ հնարավորություններ:

Շրջանավարտներ, ձեզանից յուրաքանչյուրն ուրույն անհատականություն է՝ իր երազանքներով, ձգտումներով ու նպատակներով: Սակայն միասին մենք կազմում ենք մի ամբողջություն, որին կենսունակ կպահեն ընկերասիրությունն ու բարի հուշերը: Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիս:

Շնորհակալություն:

## Career Center Establishing Important Links Internationally

By **Lusine MNATSKANYAN**  
Director of ASAU Career Center

The goal of my recent exchange visit to the University of Vienna was to create cooperative partnership and learn how to provide high quality career-oriented services to students for them to make the next step in their career.

Only a few Armenian universities, among them the Armenian State Agrarian University, can boast on having a career center. All of them are new and needing experienced advisors and experience exchange for providing a better quality service. The TEMPUS Individual Mobility Grant that I won was an excellent opportunity for this kind of experience. June 18 through June 30, within the grant, I was hosted by the Career Center of the University of Vienna. I chose this university because it is one of the oldest and largest European universities with rich traditions and experience in promoting successful careers for its students and alumni.

University of Vienna has 50,000 students. The database of the University's Career Center contains information about more than 10,000 students and alumni. The Director of the Center, Joseph Lentsch; Marketing Manager, Alexander Nagel; Advisors, Karen Kern and Iris were the core staff members who helped me clearly understand the principles and methods they use in managing the Center.

I was impressed by the strong organizational structure and the strict division of work in the Center. Each of the 8 employees is responsible for a specific direction of activities. The employers take the work with the Career Center very seriously in suggesting positions to young specialists. Along with my new theoretic knowledge, I had the opportunity to participate in one of the Career Center's assessments on the education systems of East Europe, Russia, and Ukraine. By the way, my knowledge of Russian was helpful to the program since I could make use of Russian language websites.

I appreciate this unique opportunity to participate in this exchange program in one of the most wonderful cities of the world and cordially thank TEMPUS.



## Աշխատանքի տեղավորման կենտրոնը միջազգային կապեր է հաստատում

**Լուսինե ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**  
ՉՊԱՅ աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնի տնօրեն

Հունիսի 18-30-ը Վիեննայի համալսարան իմ կատարած այցելությունը փորձի փոխանակման, գործընկերային կապեր հաստատելու, ուսանողների ու շրջանավարտների աշխատանքային կարիերային աջակցելու ծառայություններ մատուցելու սկզբունքներին ծանոթանալու նպատակ ունեւր:

Հայաստանյան միայն մի քանի համալսարաններ, դրանց թվում և ագրարային համալսարանը, կարող են պարծենալ աշխատանքի տեղավորման կամ այլ կերպ՝ կարիերայի կենտրոններ ունենալու փաստով: Նորաստեղծ այդ կենտրոնների աշխատակիցները փորձառության կարիք ունեն: Այս առումով, ուրախությամբ եմ նշում, որ ՏԵՄՊՈՒՍ-ի անհատական դրամաշնորհի շահելուց հետո ես հաճույքով մասնակցեցի Վիեննայի համալսարանի կարիերայի կենտրոնում անցկացված փորձի փոխանակմանը:

Հիսուն հազար ուսանող ունեցող Վիեննայի համալսարանի կարիերայի կենտրոնի տվյալների բազան 10 հազ. ուսանողների ու շրջանավարտների մասին տեղեկատվություն է պարունակում: Ուսանելի են կենտրոնի կազմակերպական կառուցվածքն ու աշխատանքի բաժանման սկզբունքը. ութ աշխատակիցներից յուրաքանչյուրը պատասխանատու է կոնկրետ ուղղության համար: Երիտասարդ մասնագետներին աշխատանք առաջարկելու իրենց պարտկանություններին նրանք ամենայն լրջությամբ են վերաբերվում:

Այցելության շրջանակում, տեսական գիտելիքներից բացի, ինձ հնարավորություն ընձեռվեց մասնակցելու կարիերայի կենտրոնի հետազոտություններից մեկին, որը վերաբերում էր Արևելյան Եվրոպայի, Ռուսաստանի և Ուկրաինայի կրթական համակարգերին: Ի դեպ, ռուսերենի և այդ երկրների իմ իմացությունը մեծապես օգնեց համապատասխան նյութերի մշակման առումով:

Խորապես շնորհակալ եմ ՏԵՄՊՈՒՍ ծրագրին՝ փորձի փոխանակման այսպիսի եզակի հնարավորության համար:

## Rural Development Policy as a New ATC Course

By **Vardges HOVHANNISYAN**  
ATC Instructor

A group of ATC teachers, Vardges Hovhannisyanyan, Vardan Urutyanyan and Rafael Bakhtavoryan, won a grant for a new course development announced by Curriculum Resource Centre (CRC), Budapest. The new course they are developing is entitled "Rural Economics and Development Policy" and is devoted to studying the broad coverage of versatile problems facing the farmers and other people residing in rural areas.

As a lead teacher of the course, I took part in two workshops held at CRC, Budapest. The first one was more of introductory nature aimed at providing participants with background knowledge, a repertoire of skills and practice opportunities for the improvement of their course design and teaching. The second session, held on June 15-22, was more advanced, helping participants cope with the increasing demands for professionalism and demonstration of skills and appropriate strategies required of university faculty. In providing such training, the organizers focused on the relationship between research and the classroom, the content of an

## Գյուղի զարգացման քաղաքականությունը՝ ԱՌԿ-ի դասընթաց

**Վարդգես ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
ԱՌԿ-ի դասախոս

ԱՌԿ-ի մի խումբ դասախոսներ, Բուդապեշտի Ուսումնական պլանների ռեսուրս կենտրոնից (CRC) շահած դրամաշնորհի շրջանակում մշակվում են «Գյուղի տնտեսական և զարգացման քաղաքականություն» նոր դասընթացի ծրագիրը, որն ընդգրկում է գյուղացիական տնտեսությունների և առհասարակ գյուղաբնակների ունեցած զանազան հիմնախնդիրների ամբողջության ուսումնասիրությունը: Որպես դասընթացի առջատար դասախոս, ես մասնակցեցի Բուդապեշտում մշակված կենտրոնում կայացած աշխատաժողովների շարքին:

Առաջին աշխատաժողովը առավել ներածական բնույթ ուներ և ուղղված էր մասնակիցների համար առարկայական ծրագրի կազմման և դասավանդման գործընթացների բարելավման նպատակով հիմնական գիտելիքների,

academic course and the various possible methods of its delivery. In the advanced sessions of the training they exposed the participants to some of the most relevant issues, problems and developments in higher education that are likely to become part of their professional activity as faculty.

The preparation works began on March 1<sup>st</sup> and will continue through August. The new course will be taught to the ATC students starting next spring semester.

The course is highly innovative. It will benefit the ATC students in a sense that theoretical knowledge will be strengthened by the research study results conducted by the ATC faculty in rural Armenia. In addition, the students will be required and encouraged to assess the needs and wants of rural population whether they be farmers or non-farmers. In this process the students will "learn by doing" which will prompt a meaningful and effective education in this particular sphere.



հմտությունների և գործնական հնարավորությունների բացահայտմանը: Հունիսի 15-22-ը տեղի ունեցած երկրորդ մատակարարչական առավել հանգամանից անդրադարձավ դասախոսներին ներկայացվող պրոֆեսիոնալ կարողությունների, հմտությունների և դասավանդման պատշաճ ռազմավարության պահանջներին: Կազմակերպիչները շեշտադրել էին գիտության և լսարանի հարաբերակցությունը, ակադեմիական դասընթացի բովանդակային խնդիրները և այդ բովանդակության մատուցման զանազան հնարավոր եղանակները:

Դասընթացի նախապատրաստման աշխատանքները սկսվել են մարտ ամսին և կտևեն մինչև օգոստոս: Բուն դասընթացը ԱՌԿ-ի ուսանողներին կդասավանդվի սկսած հաջորդ զարմանային ուսումնաշրջանից:

Լինելով նորարարական, դասընթացը ԱՌԿ-ի ուսանողների համար օգտակար կլինի այն առումով, որ տեսական գիտելիքները կամրապնդվեն գյուղական վայրերում ԱՌԿ-ի դասախոսների անցկացրած հետազոտությունների արդյունքներով: Բացի այդ, ուսանողներից կպահանջվի (նաև կխրախուսենք) ուսումնասիրել և գնահատել գյուղական բնակչության կարիքներն ու ցանկությունները: ԱՌԿ-ի «Արա, որ սովորես» մեթոդաբանական սկզբունքը նախանշում է իմաստալից ու արդյունավետ կրթություն՝ նաև գյուղի զարգացման բնագավառում:

## ATC Lecturers at Agri-Food Chain Conference in Netherlands

By Sona BABAYANTS  
ATC 5



Dr. Vardan Urutyán, ICARE Deputy Director, and Dr. Vardges Hovhannisyán, ATC lecturer/researcher participated in the 7<sup>th</sup> International Conference on Management in Agri-Food Chains and Networks, which was held in June 1-2, in Ede, The Netherlands. The objective of their visit was to participate in the conference and present a research paper entitled "The Role of Producer-Owned Cooperatives in Dairy Supply Chain: Evidence from Armenia".

I asked Dr. Urutyán to tell me about the topics covered at the conference as well as the importance of their participation as ATC instructors. The main theme of the 7<sup>th</sup> International Conference on Management in Agri-Food Chains and Networks was **International Chains and Networks**. Under the main theme, several sub-themes were covered by the conference: Cooperatives, Innovation, Supply Chain Management, Organization and Orchestration, Safety and Quality, Sustainability of Chains and Networks. The conference had a full program: 75 academic presentations, 20 business presentations, 30 poster presentations and a number of workshops.

"The conference contained a very strong business track, which took place in parallel to academic track," said Dr. Urutyán. "The program offered a good representation of the international agri-food business, with eight presentations at CEO level."

He mentioned that this conference was very important for the professional development of participants from developing and transitional countries. They met the most important people in the agri-food industry and in the areas of research, policy analysis and decision making, who appeared in the academic and business tracks to discuss their perspectives and views on development strategies and about their experiences. "The conference gave us an opportunity to become members of a very good academic network, which aims to promote the study and teaching of agricultural supply chains and relevant disciplines, and their application to issues in the agricultural, food and related industries, rural communities and the environment," Dr. Urutyán said.

For two years, ATC will be receiving the Journal on Chain and Network Science, which is published by the Wageningen Academic Publishers.

## Ագրոպարենային շղթայի խորհրդաժողովում

Սոնա ԲԱԲԱՅԱՆՑ  
ԱՌԿ 5

ԱՅԿԱՎ փոխտնօրեն Վարդան Ուռուտյանը և ԱՌԿ-ի դասախոս-հետազոտող Վարդգես Հովհաննիսյանը մասնակցեցին Հոլանդիայի Էդ քաղաքում անցկացված 7-րդ միջազգային խորհրդաժողովին՝ նվիրված ագրոպարենային շղթայի և ցանցի կառավարմանը: Նրանք նաև ներկայացրեցին «Արտադրողների կոոպերատիվների դերը կաթնամթերքի մատակարարման շղթայում. վկայություններ Հայաստանից» վերտառությամբ գիտական հոդվածը: Ես խնդրեցի դուրս գալ. Ուռուտյանին պատմել շոշափված թեմաների, ինչպես և իրենց՝ որպես ԱՌԿ-ի դասախոսների, մասնակցության կարևորության մասին: Խորհրդաժողովի հիմնական թեման միջազգային շղթաներն ու ցանցերն էին, որն ուներ մի շարք ենթաթեմաներ՝ կոոպերատիվներ, ինովացիա, մատակարարման շղթաների կառավարում, կազմակերպում և համաձայնեցում, անվտանգություն և որակ, շղթաների և ցանցերի կայուն զարգացում: Խորհրդաժողովի ընթացքում տեղի ունեցան ակադեմիական 75 ներկայացում, 20 բիզնես ներկայացում, 30 պաստառների ներկայացում, ինչպես նաև մի շարք աշխատաժողովներ:

«Խորհրդաժողովը ակնհայտ գործարար ուղղվածություն ուներ, - ասաց դուրս. Ուռուտյանը, - Ապահովված էր ագրոպարենային բիզնեսի միջազգային լայն ներկայացուցչականությունը»: Ուռուտյանը խորհրդաժողովը կարևորեց զարգացող և անցումային երկրներից եկած մասնակիցների մասնագիտական զարգացման տեսանկյունից: «Խորհրդաժողովը մեզ հնարավորություն տվեց դառնալու անդամները ակադեմիական հիանալի մի ցանցի, որը նպաստում է գյուղատնտեսական մատակարարումների շղթայի ուսումնասիրությանն ու համապատասխան առարկաների դասավանդմանը, ինչպես նաև կիրառական նշանակություն ունի ագրոպարենային ոլորտի, գյուղական համայնքների կենսագործունեության և շրջակա միջավայրի առնչությամբ», - ասաց դուրս. Ուռուտյանը: Երկու տարի անընդմեջ ԱՌԿ-ը կստանա *Journal on Chain and Network* («Շղթայի և ցանցի գիտություն») ամսագիրը:

Agribusiness Teaching Center, International Center for Agribusiness Research and Education Foundation  
74 Teryan St., Yerevan, Armenia  
In corporation with USDA FAS, Texas A&M University, and the State Agrarian University of Armenia

Tel: (37410) 52-28-39, 56-95-70; Fax: (37410) 56-62-21

E-mail: sos\_avetisyan@yahoo.com

Հ. ՌԱՄՇԻՅՆԵՑ ՏՆՔՆՈՒՄՅ Կ' ԻՊԻ ՌՅԻ . ՕՈ՞Յ Կ, ԻՊՈ՞Յ Կ 74